Արձանագրություն 3

ՍՊԳՀԾՁԲ-19/35 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 11.09.19թ.

ժ.11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Մասիս Աղայանց /գնահատող/

Հանձնաժողովի անդամ՝ Հովսեփ Գրիգորյան /գնահատող/

Արսեն Բաղդասարյան /գնահատող/

Հարություն Մարտիրոսյան /բացող/

Խաչատուր Գևորգյան /բացող/

Հանձնաժողովի քարտուղար՝ Աննա Սիմոնյան

1. Որակավորման փաստաթղթերի գնահատման մասին

(Մ.Աղայանց)

1.1 «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում և հրավերով սահմանված կարգով ներկայացրել է հրավերով նախատեսված փաստաթղթերը:

1.2 << կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ստացվել է համապատասխան եզրակացությունը, համաձայն որի «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ և բավարարում է «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմաններին:

2. Որակավորման փաստաթղթերի գնահատման արդյունքում արձանագրված անհամապատասխնությունների մասին

(Մ. Աղայանց)

2.1 «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում արձանագրվեցին հետևյալ անհամապատասխանությունները.

2.1.1 Ներկայացված Հավելված 3.2-ում անհասկանալի է հիմնական աշխատակազմում ներառված մասնագետների աշխատանքային փորձի ժամանակահատվածը (ամիս կամ տարի և/կամ/ այլն), ինչը հնարավորություն չի տալիս գնահատելու ներկայացված տեղեկատվությունը:

2. 1.2 Ներկայացված Հավելված 3.2-ում հիմնական աշխատակազմում ներառված մասնագետների գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը չի համապատասխանում հրավերով պահանջվող գործունեության ոլորտին և կատարած աշխատանքին:

2.1.3 Հիմնական աշխատակազմում ներառված Արշավիր Կարապետյանի կողմից տրված գրավոր համաձայնությունը արտատպված (սկանավորված) չէ բնօրինակից, բացակայում է լիցենզիայի ներդիրը կամ արտոնագիրը, իսկ դիպլոմն ու անձնագիրը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

2.1.4 Հիմնական աշխատակազմում ներառված Հրաչյա Հովսեփյանի կողմից տրված գրավոր համաձայնությունը արտատպված (սկանավորված) չէ բնօրինակից, իսկ անձնագիրը, դիպլոմն ու արտոնագիրը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

2.1.5 Բացակայում է հիմնական աշխատակազմում ներառված Սասուն Միրզոյանի լիցենզիայի ներդիրը կամ արտոնագիրը, իսկ դիպլոմն ու անձնագիրը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

2.1.6 Բացակայում է հիմնական աշխատակազմում ներառված Գագիկ Մադաթյանի դիպլոմը և լիցենզիայի ներդիրը կամ արտոնագիրը, իսկ անձնագիրը հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

2.1.7 Հիմնական աշխատակազմում ներառված Նելսոն Սարգսյանի անձնագիրը, դիպլոմն ու արտոնագիրը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

2.1.8 Առաջադրված հիմնական աշխատակազմում բացակայում է ներգրավված բարձրագույն կրթությամբ ճարտարագետ-էլեկտրիկ մասնագետը:

2.1.9 Ներկայացված 2 ճարտարագետ-էներգետիկ մասնագետների լիցենզիաների ներդիրների կամ արտոնագրերի բացակայության պատճառով հնարավոր չէ իրականացնել <<Աշխատանքային ռեսուրսներ>> որակավորման չափանիշի գնահատում, հաշվի առնելով որ հրավերով պահանջվել է 3 ճարտարագետ-էներգետիկ, որից միայն 2 ներդիրներով սահմանված ոլորտներում աշխատանքը հնարավոր է կատարել մեկ մասնագետի՝ ճարտարագետ-էներգետիկի ներգրավմամբ, եթե նա միաժամանակ ներգրավված է երկու ներդիրներում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

3. Գնահատման գործընթացի կասեցման վերաբերյալ

3.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 47-րդ կետը՝ կասեցնել գնահատման գործընթացը և առաջարկել «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ին երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստն անցկացնել ս/թ սեպտեմբերի 11-ին, ժամը՝ 12:00 -ին, ք. Երևան, Կառավարական տուն 2, 303 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց ս/թ սեպտեմբերի 11-ին, ժամը 12:00-ին, ք. Երևան, Կառավարական տուն 2, 303 սենյակ հասցեում

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Մասիս Աղայանց /գնահատող/
Հանձնաժողովի անդամ՝	Հովսեփ Գրիգորյան /գնահատող/
	Արսեն Բաղդասարյան /գնահատող/
	Հարություն Մարտիրոսյան /բացող/

Խաչատուր Գևորգյան /բացող/

Հանձնաժողովի քարտուղար՝ Աննա Սիմոնյան

5. Արձանագրված անհամապատասխանությունները շտկելու, հայտը գնահատելու և գնահատման արդյունքների մասին
(Մ. Աղայանց)

5.1 «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում և սահմանված կարգով շտկել է գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունները:

5.2 Հիմք ընդունելով հանձնաժողովի կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ի հայտը գնահատել բավարար և հայտարարել 1-ին տեղ զբաղեցնող /ընտրված մասնակից/:

5.3 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետը՝ առանց անգործության ժամկետ սահմանելու, ընտրված մասնակցին, էլեկտրոնային ձևով գնումների կազմակերպման կարգին համապատասխան՝ ARMEPS համակարգով, ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

_____ Մասիս Աղայանց //նախագահ/

_____ Հովսեփ Գրիգորյան

_____ Արսեն Բաղդասարյան

_____ Հարություն Մարտիրոսյան

_____ Խաչատուր Գևորգյան

_____ Ա. Սիմոնյան/քարտուղար/